



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**

**Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

13 հուլիսի 2011թ. թիվ 348

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունիսի 10-ի “Գույք հանձնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. սեպտեմբերի 22-ի N 1672-Ա որոշումը չեղյալ ճանաչելու մասին” թիվ 851-Ա որոշման 1.3 կետի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի “Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին” թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով՝

Կ ա Ր Գ ա Դ Ր ու մ եմ.

1. “Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի աշխատակազմ” պետական կառավարչական հիմնարկի ենթակայության՝ “Ալավերդու թիվ 5 միջնակարգ դպրոց” պետական ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված՝ Ալավերդի քաղաքի Խուոյակովի 2ա/22 հասցեում գտնվող՝ 1125.7 քմ մակերեսով մասնաշենքը և դրա զբաղեցրած, օգտագործման ու սպասարկման համար անհրաժեշտ հողատարածքը հետ վերցնելու և “Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիա” հիմնադրամին հանձնելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն կարգադրության կատարման հսկողությունը դնել մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ Մ.Խաչատրյանի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

*A. Քասաբ*

Ա.ԴԱՐԲԻՆՅԱՆ

2011թ. հուլիսի 13  
ք.Վանաձոր